ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՄՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

Ուրարտական ռազմական ճարտարապետության կազմավորման և զարգացման մեջ արտահայտվեցին ինչպես տեղական, բրոնզեդարյան ամրոցների շինարարական ավանդների ներքին օրինաչափ էվոլյուցիան, այնպես էլ տարբեր ժամանակներում, տարբեր չափերով ներգործած փոքրասիական և միջագետքյան ազդեցությունները։ Համեմատելով Թեյշեբաինի քաղաքի Միջնաբերդի և ավելի վաղ կառուցված ուրարտական այլ ամրոցների պաշտպանական շինությունները, մասնավորապես պարիսպների և մուտքերի ճարտարապետական ձևերը, նրանց մեջ տեսնում ենք ակնառու տարբերություններ, զարգացման որոշակի տենդենց, որի ակունքները կարելի է գտնել ասսուրա-բաբելական ժամանակակից ճարտարապետության մեջ։ Ասսուրա-բաբելական մշակույթի ազդեցությունը Ուրարտուի վրա, որ դգացվում է ամենուրեք, ավելի ինտենսիվ է դառնում նրա պատմության ուշ շրջանում, որն արտահայտվում է ինչպես ամրաշինության և ընդհանրապես ճարտարապետության, այնպես էլ ուրարտական մշակույթի այլ բնագավառներում։ Այս դրույթները, որոնց վրա ավելի մանրամասն և փաստացի կանգ կառնենք ստորև, արդյունք են մինչ այժմ պեղված փոքրաթիվ հուշարձանների համեմատական վերլուծության, և դրանով իսկ, ունեն առավել հարցադրման, քան վերջնական ու սպառիչ եզրակացության բնույթ։

Ուրարտական ամրաշինության առանձնահատկությունները երևան հանելու և նրա զարգացման հետագա ընթացքին հետևելու համար անհրաժեշտ է համառոտ ներկայացնել ռազմական ճարտարապետության այն սկզբունքներն ու ձևերը, որ դարերի ընթացքում արդեն մշակվել էին Հայկական լեռնաշխարհում Ուրարտական պետության կազմավորման նախօրեին, ներկայացնել այն հիմքը, որի վրա բարձրացավ ուրարտական, էությամբ արդեն պետական ամրաշինությունը։ Նպատակ չունենալով այս հոդվածում անդրադառնալ բրոնզեդարյան և ուրարտական ամրոցների պաշտպանական սիստեմների ընդհանուր և բազմակողմանի վերլուծությանը, մենք կհետևենք միայն պարսպի և մուտքի ամրաշինական-ճարտարապետական հատակագծային ձևերի զարգացմանը՝ համադրելով նրանց ժամանակի այլ հուշարձանների հետ։

Պաշտպանվելու անհրաժեշտությունն ակներև է արդեն Հայկական լեռնաշխարհի III հազարամյակի բնակավայրերում, որոնք այդ նկատառումով կառուցված են հնարավոր դժվարամատչելի վայրերում՝ բլուրների վրա և սարահարթերի եզրին (Շենգավիթ, Մուխանաթ-թափա, Աղթամիր, Գառնի, Լճաշեն, Թագավորանիստ և այլն)։ Միջին և մանավանդ ուշ բրոնզի դարաշրջանների հարյուրավոր ամրոց-բնակատեղիներ են պահպանվել Հայկական լեռնաշխարհում, որոնց մասին գրավոր հիշատակություններ կան նաև խեթական[1] և ասու-

[1] Г. А. Меликишвили, Наири-Урарту, Тбилиси, 1954, էջ 87։

բական[2] աղբյուրներում։ Այս դարաշրջանների հուշարձանները անհամեմատ ավելի լավ են ուսումնասիրված Սովետական Հայաստանի տերիտորիայում, որտեղից և կբերենք մեր օրինակները, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայկական լեռնաշխարհը այդ շրջանում ունեցել է մշակույթի զարգացման ընդհանուր և համեմատաբար համասեռ մակարդակ[3]։



Աղյուսակ 1.

Հնագույն ամրոց-բնակատեղիների պարիսպները, որ կառուցված են խոշոր և անտաշ ժայռաբեկորներից, ձգվում են բլրի հարթ (կամ հարթեցված) գագաթի եզրագծով, ռելեֆին խիստ համապատասխան անկանոն կոր գծագրությամբ։ Այդպիսին են Սառնաղբյուր գյուղի «Ղալաիչի», «Թոփ-քար» և Հոռոմ գյուղի ամրոցները[4] (աղ. I, գծ. 1)։

---

[2] И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту, «Вестник древней истории», 1951, № 2, *էջ 271։*

[3] А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, *էջ 294—299։*

[4] *Մեր չափագրությունները և հետախուզական պեղումները Սառնաղբյուրի «Ղալաիչի» և «Թոփ-քար» ամրոցներում պարզել են առաջինում մշակութային-շինարարական երկու շերտ, որոնք պատկանում են III հազարամյակի II կեսին և X—VI դդ. մ. թ. ա., իսկ երկրորդում միայն III հազարամյակին (ինչպես այս, այնպես էլ մեր ուսումնասիրած բրոնզեդարյան մյուս ամրոց-*

Ավելի ուշ պարիսպը ստանում է կանոնավոր շարվածքի ձև, հատակագծում՝ որոշ ուղղագծություն կամ երկրաչափական կոր գծագրություն, արդյունավետ պաշտպանության նպատակով և օգտագործելով ռելեֆի ընձեռած հնարավորությունները, արվում են հատակագծային զիգզագաձև ելուստներ, որոնց մեջ, մեր կարծիքով, կարելի է տեսնել պաշտպանական աշտարակի և կոնտրֆորսի գաղափարի սաղմերը (Սառնաղբյուրի «Շիշբլուր», Լեռնակերտի «Վերի բերդ» և «Վարի բերդ» ամրոցները[5], աղ. I, գծ. 2)։ Հետագայում այդ ելուստները ընդունում են ուղղանկյուն ձևեր, որոշակի համաչափություն և ռիթմ՝ ելնելով ֆունկցիոնալ պաշտպանական և, հավանական է, արդեն էսթետիկական նկատառումներից։ Պարսպի ընդհանուր հատակագիծը հիմնականում մնում է ռելեֆին խիստ հպատակ անկանոն կորագիծ՝ ջլատված աշտարակաձև ելուստներով, որոնք կառուցվում են միմյանցից մոտավորապես հավասար հեռավորությամբ կամ, երբեմն, միայն առավել պատասխանատու հատվածներում։ Այս շրջանում կարելի է նկատել նաև տեղայնական որոշ յուրահատկություններ. եթե Սևանի ավազանի բրոնզեդարյան ամրոցներում աշտարակաձև ելուստները մեծ մասամբ ունեն ավելի մասսիվ բնույթ՝ 3—5 մ ելուստով[6] (աղ. I, գծ. 3), իսկ Արագածոտնում, Արարատյան դաշտավայրում, Ամասիայի և Ղուկասյանի շրջաններում նրանք սովորաբար ավելի փոքր են (աղ. I, գծ. 4), ապա Իջևանի, Կարմիրի, Շամշադինի շրջանների ժամանակակից ամրոցներում աշտարակաձև ելուստներ հազվադեպ են հանդիպում[7]։ Սակայն այս տարբերությունները չդարձնելով քննության առարկա, մենք բավարարվում ենք նշելով միայն այն փաստը, որ ուղղանկյուն աշտարակաձև ելուստների (կոնտրֆորսների) կամ աշտարակների հավասարաչափ ռիթմով և հատակագծում ռելեֆին համապատասխան անկանոն գծագրությամբ պարսպի ձևը վաղուց արդեն գոյություն ուներ Հայկական լեռնաշխարհում, նախքան Ուրարտական պետության կազմավորումը։ Այդ են վկայում Շենգավիթի, Մեծամորի, Թազաքենդի պեղումների և բազմաթիվ այլ հուշարձանների հետախուզական ուսումնասիրությունների նյութերը[8]։

ների հնագիտական նյութերը մեր խնդրանքով թվագրել է պրոֆ. Հ. Ա. Մարտիրոսյանը)։ Աղյուսակում պատկերված «Ղալաիչի» ամրոցի պարիսպը, որն իր հատակագծի և շարվածքի նախնական ձևերով նման է «Թոփ-քար» և Հոռոմի ամրոցների պարսպին և շատ տարբեր է ուշ բրոնզի դարաշրջանի հարևան մյուս ամրոցներից, մեր կարծիքով, վերաբերում է հուշարձանի վաղ շերտին։ Ամրոցում պահպանվել են նաև երկրորդ շրջանում կառուցված պարսպի և բնակարանների մնացորդներ։

5 «Վերի բերդ» և «Վարի բերդ» ամրոցների վերգետնյա հնագիտական նյութերը թվագրվում են XVIII—XV դդ. մ. թ. ա. «Շիշբլուրում» հետախուզական պեղումներով հայտնաբերված նյութական մշակույթի նմուշների գերակշռող մասը նույնպես վերաբերում է միջին բրոնզի դարաշրջանին։

6 Գ. Հ. Մ ի ք ա յ ե լ յ ա ն, Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները, Երևան, 1968, աղ. 7, 10, 27, 28, 29 և այլն։

7 Ս. Ե ս ա յ ա ն, Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Շամշադինի մի քանի կիկլոպյան ամրոցների մասին, Հայկ. ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1965, № 11, էջ 80։ Գ. Մ ի ք ա յ ե լ յ ա ն, Ս. Ե ս ա յ ա ն, Շամշադինի և Կրասնոսելսկի շրջանների կիկլոպյան ամրոցները, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 289—296։

8 Մեր ուսումնասիրած այդ տիպի ամրոցների նյութերը տվել են հետևյալ ժամանակագրությունները. Սառնաղբյուրի «Փոքր բերդ»՝ XI—X դդ. մ. թ. ա., «Մեծ բերդ»՝ միջին բրոնզի ժամանակաշրջան և X—VI դդ. մ. թ. ա., Դառնահովիտի երկու ամրոցները՝ XIII—X դդ. մ. թ. ա. և այլն։

Չնայած մասշտաբների զգալի տարբերությանը, ակներև է պարսպի մեր նկարագրած վերջին տիպի ձևերի սկզբունքային նմանությունը խեթական ամրաշինական ձևերի հետ (Խատտուսա, XV—XIII դդ. մ. թ. ա., աղ. I, գծ. 9)[9]։ Նման հատակագծային հորինվածք ունեն նաև ասսուրական Աշուր (IX դ. մ. թ. ա., աղ. I, գծ. 10)[10] և ուշ խեթական Սամալ[11] քաղաքների պարիսպները (VIII դ. մ. թ. ա.)։ Ասորիստանում, մի փոքր ավելի ուշ, պարսպի հատակագծային ձևերը դառնում են խիստ ուղղաձիգ, կանոնավոր երկրաչափական գծագրությամբ՝ մի շրջան, որ չապրեց խեթական ամրաշինությունը պետության վաղ կործանման պատճառով[12]։

Ահա սա է II հազարամյակի երկրորդ կեսին և I հազարամյակի սկզբին Առաջավոր Ասիայում ընդհանրացում գտած ամրաշինական մտքի և փորձի այն մակարդակը, որի հիմքի վրա և ազդեցության ոլորտում կազմավորվեց ու զարգացավ ուրարտական ամրաշինությունը՝ օրինաչափ և տրամաբանական շարունակությունը կազմելով Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան ամրաշինության ավանդների։

Դժբախտաբար մինչ այժմ շատ անբավարար են ուսումնասիրված Վանի շրջանում գտնվող վաղ ուրարտական ամրաշինական հուշարձանները, որոնք պատկերելով ուրարտական պետական ամրաշինության սկզբնավորումը, չափազանց կարևոր են մեզ հետաքրքրող հարցերի առումով։ Ցուցենք նույնիսկ Ուրարտուի մայրաքաղաքի՝ Տուշպայի միջնաբերդի հատակագիծը, որը միջնադարում կրել է անճանաչելի վերափոխումներ և, մնալով գործող ամրոց, միշտ փակ է եղել ուսումնասիրողների առջև։ Այս պայմաններում պաշտպանական պարսպի ճարտարապետական ձևերի հետագա զարգացմանը կարող ենք հետևել մ. թ. ա. VIII—VII դդ. ուրարտական հուշարձանների օրինակներով։

Ուրարտուն նախորդ շրջանում ստեղծված պարսպի տիպին հաղորդեց նոր որակական հատկանիշ՝ ուղղագծությունը և ձգտումը դեպի պատերի փոխուղղահայաց հատակագծային ցանցը, որն առավել հարմար էր պետական բնույթի և, հետևապես, խոշոր մասշտաբների կառույցների հատակագծերի ռացիոնալ լուծումների համար և պայմանավորված էր նաև շինարարության մեջ կանոնավոր, տիպական չափերի աղյուսների լայն օգտագործմամբ։ Ամրաշինական կառուցվածքների ձևերի այս երկրաչափականացումը, որտեղ անմիջականորեն արտացոլվեցին ասսուրա-բաբելական նույն ձևերի զարգացման տենդենցները, նրանց զուգահեռ առաջադիմեց նաև Ուրարտուում՝ նրա պատմության ողջ ընթացքում։

---

[9] K. Bittel und R. Naumann, Bogazköy-Hattusa, Stuttgart, 1952, էջ 82, աղ. 1։

[10] E. Strommenger et M. Hirmer, Cinq millenaires d'art Mesopotamien, Paris, 1964, էջ 103։

[11] E. Akurgal, The art of the Hittites, New York, էջ 134։

[12] Շատ հետազոտողներ են գրել Ուրարտուի վրա խեթական շինարարական ավանդների ունեցած ազդեցության մասին։ Չնայած կասկածից դուրս է այս երկու մշակույթների միջև աղերսների գոյությունը, սակայն ժամանակների մեծ տարբերության պատճառով այս մասին կարելի է խոսել միայն որոշ վերապահումով։ Խեթական ավանդները Ուրարտական պետությանը կարող էին անցնել միջնորդավորված ձևով՝ իրենց ազդեցությամբ Հայկական լեռնաշխարհի նախաուրարտական ամրոց-բնակատեղիների վրա, որտեղից և կարող էր ժառանգել Ուրարտուն։

Մ. թ. ա. VIII դ. կեսերին կառուցված ամրոցներում՝ Էրեբունիում[13], Արգիշտիխինիլիի արևելյան և արևմտյան միջնաբերդերում[14] տեսնում ենք արդեն պարսպի հատակագծային որոշակի մշակված ձևեր. 3,5—4 մ հաստությամբ պարիսպը ունի միջին հաշվով 7—8 մ միմյանցից հեռու տեղադրված ուղղանկյուն կոնտրֆորսներ՝ մոտ մեկ մետր ելուստով և 4,5—5 մ երկարությամբ (աղ. I, գծ. 5)։ Այսպիսի պարիսպը տիպական է այդ շրջանի ուրարտական ամրաշինության համար, որովհետև որոշ ոչ էական տարբերություններով հանդիպում է նաև բազմաթիվ այլ հուշարձաններում՝ Էլարում, Կանսիկլիում, Քեֆկալեսիում, Անզաֆում և այլն[15]։

Միջագետքում հատակագծի այսպիսի հորինվածքով պարսպի տիպական օրինակ է ասսուրական թագավորանիստ Դուր-Շարուկինի (712—707 թթ. մ. թ. ա.) միջնաբերդի պարիսպը[16], որը, ունենալով մոտավորապես նույն համաչափությունները, բացարձակ չափերով մոտ երեք անգամ գերազանցում է ուրարտականին։

Էրեբունիից և Արգիշտիխինիլիից մոտ մեկ դար ուշ կառուցված Թեյշեբաինի քաղաքի միջնաբերդի պարիսպները ունեն առաջիններից բավական տարբեր հատակագծային և տարածական ձևեր։ Սովորական կոնտրֆորսներից բացի այստեղ պարիսպն ամրացված է միմյանցից ավելի մեծ հեռավորությամբ կառուցված հզոր աշտարակներով, որոնք ելուստավորվում են պարսպի թե՛ ներքին, և թե՛ արտաքին կողմերից[17] (աղ. I, գծ. 7)։ Աշտարակների և կոնտրֆորսների այս համադրությունը ստեղծել է պաշտպանական տեսակետից ավելի կատարյալ ու բարդ սիստեմ՝ ուժերի ըստ նպատակահարմարության դիֆերենցված տեղաբաշխմամբ։ Նույն սկզբունքով է կառուցված նաև Արագածի ուրարտական բնակատեղիի միջնաբերդը (աղ. I, գծ. 8), որի պեղումների հնագիտական նյութերը բավարար հիմք չեն տվել ամրոցի թվագրման համար[18]։ Ելնելով այս երկու ամրոցների ընդհանուր տարածական լուծման և ամրաշինական, ճարտարապետական սկզբունքների նույնությունից՝ սկզբունքներ, որ ինչպես հետո կփորձենք ապացուցել, կարող էին առաջ գալ ուշ ուրարտական ժամանակաշրջանում միայն, մեր կարծիքով Արագածի միջնաբերդի կառուցումը ևս կարելի է վերագրել VII դ. մ. թ. ա.։

Պարսպի երկու կողմերից ելուստավորվող մեծ աշտարակներ ունի Ազնավուրի ուրարտական ամրոցը, որի կառուցումը Բարնեյը և Լաուսոնը, հենվելով այնտեղ գտնված արձանագրական նյութերի վրա, վերագրում են նույնպես VII դ. մ. թ. ա.[19] (աղ. I, գծ. 6)։

---

13 Կ. Լ. Օգանեսյան, Архитектура Эребуни, Ереван, 1961, էջ 20։

14 Այս և աղյուսակներում պատկերված մի քանի ամրոցների հատակագծերի մանրամասները, որոնց աղբյուրները չեն նշված, ներկայացնում ենք ըստ մեր չափագրությունների։

15 Վերջին երեք ամրոցների վերաբերյալ տե՛ս C. A. Burney and G. R. J. Lawson, Measured plans of Urartian fortresses, Anatolian studies, vol. 10, 1960, էջ 178—181, 188—192։

16 E. Strommenger et M. Hirmer, Նշվ. աշխ., էջ 113։

17 Կ. Լ. Օգանեսյան, Архитектура Тейшебаини, Ереван, 1955, նկ. 13։

18 Կ. Լ. Օգանեսյան, Урартское поселение в селе Арагац, Հայկ. ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1958, № 4, էջ 78։

19 C. A. Burney and G. R. J. Lawson, Նշվ. աշխ., էջ 192։

Միջագետքում նման աշտարակներով պարիսպներ հայտնի են Նոր Բաբելոնի ժամանակաշրջանից։ Այդպիսին են Բաբելոնում[20] (աղ. I, գծ. 12) և մի փոքր տարբեր՝ Ուռում[21] Նաբուգոդոնսոր արքայի (604—562 թթ. մ. թ. ա.) ամրաշինական կառույցները։



Աղյուսակ 2

* * *

Մուտքը ամրոցի պաշտպանական կոմպլեքսի ամենախոցելի հատվածն է։ Անգամ բոլոր կողմերից բնականորեն անառիկ ամրոցն ունի առնվազն մեկ մուտք՝ դեպի նա տանող ճանապարհով, որից կարող է օգտվել նաև թշնամին։ Մուտքի բացվածքը, փակված թեկուզ հզոր դարպասներով, անհամեմատ ավելի թույլ դիմադրողականություն ունի, քան պարսպի շարքային հատվածը։ Հետևաբար, մուտքի կառուցման ժամանակ անհրաժեշտ է առավելագույն խնամք ու հնարամտություն՝ ստեղծելու համար պաշտպանական ուժերի հզոր կենտրոնացում, լայն ճակատով բազմակողմանի հարվածի հնարավորություն։

Հայկական լեռնաշխարհի և, ընդհանրապես, Առաջավոր Ասիայի ամրաշինական կառույցներում կարելի է տեսնել այս նույն խնդիրների լուծման միմյանցից տարբեր և դարերի ընթացքում զուգահեռաբար զարգացող երկու սկզբունք։ Առաջինը մուտքի ճակատային, սիմետրիկ տեղադրումն է, որի

[20] E. Strommenger et M. Hirmer, նշվ. աշխ., էջ 125։
[21] L. Wooley, Excavations at Ur., London, 1955, էջ 139։

դեպքում նրա երկու կողմերում կառուցվում են պաշտպանական աշտարակներ կամ մուտքի բացվածքը արվում է մեկ այդպիսի հզոր աշտարակի առանցքով։ Կոնտրֆորսների հավասարաչափ ռիթմով ջլատված պարսպի միապաղաղ ֆոնի վրա մուտքի այսպիսի հորինվածքը նրան հաղորդում է շեշտված վեհության, հանդիսավորության, հզորության երևույթ։ Մոտեցումը կամ ճանապարհը այս դեպքում մուտքի առջև սովորաբար լինում է ճակատային՝ պարսպին ուղղահայաց։

Երկրորդ դեպքում արդյունավետ պաշտպանության հարցերը լուծվում են ավելի հնարամիտ, խորամանկ միջոցներով։ Մուտքը տեղադրվում է պարսպի առաջին հայացքից աչքի չընկնող անկյունային մասում կամ այդ նպատակով պարսպի հատակագծում արված շրջադարձային հատվածի խորքում։ Մուտքի այսպիսի կառուցվածքը հնարավորություն է տալիս սահմանափակել թշնամու գործունեության դաշտը և, հետևաբար, մուտքի առջև նրանց ուժերի կենտրոնացումը, երկու կամ երեք կողմերից խաչաձև հարվածի տակ առնել հարձակվողներին։ Բացի այդ, դեպի ամրոց տանող ճանապարհը մուտքի մոտ անհրաժեշտաբար անցնում է պարսպի փոխհատվող հատվածներից որևէ մեկին զուգահեռ կամ նրա նկատմամբ փոքր անկյան տակ և միշտ կարող է հսկողության առնվել այդ կողմից։

Ամրոցի մուտքի կառուցման այս երկու լուծումների սկզբնական ձևերն ու զարգացումը մենք դարձյալ տեսնում ենք Հայաստանի բրոնզեդարյան ամրոցբնակատեղիներում։ Շատ համառոտ ներկայացնենք մի քանիսը։

Հնագույն ամրոցներում, որտեղ պարիսպը կառուցված է խոշոր, անմշակ քարերի անշաղախ շարքով, մուտքի բացվածք են կազմում երկու համեմատաբար կանոնավոր, կայուն և զանգվածային ժայռաբեկոր («Թոփ-քար», աղ. II, գծ. 1)։ Պետք է ենթադրել, որ այդպիսի մուտքը չէր կարող ունենալ դարպասներ և պաշարման ժամանակ, հավանաբար, փակվում էր քարի շարվածքով։ Ամրոցի այսպիսի պարզունակ մուտքեր, իհարկե ավելի կատարելագործված շարվածքով, հանդիպում են նաև հաջորդ շրջաններում («Վարի բերդ», Տուֆաշենի ամրոցը, «Արծվաքար—1» և այլն, աղ. II, գծ. 2, 3)։

Ռազմական ճարտարապետության զարգացման այն շրջանում, երբ երևան են գալիս աշտարակներն ու կոնտրֆորսները, նրանցով առաջին հերթին, բնականաբար, ամրացվում են մուտքերը։ Մի դեպքում իրար մոտ տեղադրված երկու աշտարակների միջև է թողնվում մուտքի բացվածքը (Հնաբերդ, Ադամխան[22] և այլն, աղ. II, գծ. 4), մի այլ դեպքում աշտարակները կառուցվում են մուտքի բացվածքից որոշ հեռավորությամբ՝ սիմետրիկ (Բանդևան—2, «Բրուտի բերդ»[23] և այլն, աղ. II, գծ. 5)։ Ճակատային, սիմետրիկ մուտքեր ունեն ուրարտական Քեֆկալեսի[24] (աղ. II, գծ. 6) և Ծովինար ամրոցները։ Սակայն մուտքի կառուցման այս սկզբունքը Ուրարտուում իր բարձրագույն արտահայտությունն է գտնում Թեյշեբաինիի միջնաբերդում[25] (աղ. II, գծ. 7)։

Փորձենք ամենաընդհանուր գծերով հետևել Փոքր Ասիայում և Միջագետքում ամրոցների մուտքերի ճարտարապետական, հատակագծային ձևերի զար-

22 Գ. Հ. Միքայելյան, Նշվ. աշխ., աղ. 59։
23 Նույն տեղում, աղ. 72։
24 C. A. Burney and G. R. J. Lawson, Նշվ. աշխ., էջ 188։
25 К. Л. Оганесян, Архитектура Тейшебаини, էջ 36։

գացմանը։ Եթե Տրոյայի 2-րդ շերտի ամրոցում, որ թվագրվում է III հազարամյակի կեսերով, մուտքը ամրացված է նրա երկու կողմերում դուրս բերված աշտարակաձև ոչ մեծ ելուստներով[26], (աղ. II, գծ. 8), ապա Տել-Հարմալում[27] (II հազ. սկիզբ մ. թ. ա.), Խատտուսայում[28], Ալիշարում[29] (II հազ. սկիզբ մ. թ. ա, աղ. II. գծ. 9, 10, 11) մուտքը թողնված է զանգվածային հզոր աշտարակների միջև։ Վերջին երկու հուշարձանների մուտքերը ունեն նաև կրկնակի դարպասներ, որոնք հաղորդվում են միմյանց հետ միջանկյալ շլյուզային տարածությամբ։ Այս դեպքում, նույնիսկ առաջին դարպասի գրավումից հետո թշնամու փոքրաքանակ զինվորները, որ կարող էին տեղավորվել շլյուզում, կհայտնվեին երկրորդ փակ դարպասի առջև՝ չորս կողմից իրենց վրա ընդունելով ամրոցի պաշտպանների վերևից եկող հարվածները։ Ամրոցի մուտքի հատակագծային այս սխեման, ապրելով զարգացման որոշ ձևափոխումներ, հետագայում պահպանվում է համարյա բոլոր հուշարձաններում։ Միաժամանակ, շնորհիվ հատակագծային պաշտպանական հնարքների և շինարարական տեխնիկայի զարգացման, պակասում է մուտքի աշտարակի պատերի հարաբերական հաստությունը (Աշուր[30], Սամալ[31] և այլն, աղ. II, գծ. 12, 13)։ Դուր-Շարուկինի միջնաբերդի և քաղաքային պարիսպների մուտքերը ունեն շլյուզներով միմյանցից բաժանված երեք և, նույնիսկ, չորս դարպասներ[32] (աղ. II, գծ. 14)։ Այս շրջանում Միջագետքի ամրոցների մուտքերի հատակագծերում երևան է գալիս մի նոր երևույթ՝ մուտքի աշտարակի ծավալում տեղավորվում են նաև, այսպես կոչված, պահակային սենյակները, որոնց դռները բացվում են դեպի շլյուզները։ Այդպիսի հատակագծային կառուցվածք ունեն Դուր-Շարուկինի և Ուռի Նոր-բաբելոնյան ժամանակաշրջանի պարիսպների մուտքերը[33] (աղ. II, գծ. 15)։

Վերադառնանք ուրարտական ամրաշինությանը և մեր այս վերջին դիտումների լույսի տակ քննենք Թեյշեբաինիի միջնաբերդի գլխավոր մուտքի հատակագիծը։ Այժմ արդեն պարզ կարելի է տեսնել, թե ինչպես այստեղ, փոքրասիական վաղ ամրաշինությանը բնորոշ զանգվածային աշտարակի մեջ կառուցվել է ուշ ասսուրական ժամանակաշրջանում միայն կիրառություն գտած պահակային սենյակը, որը հատակագծում պարսպի ընդհանուր գծագրության թելադրանքով ունի անկանոն քառանկյան ձև։ Այս յուրահատուկ երևույթը մենք տեսանք նաև նույն հուշարձանի պարսպի ճարտարապետական ձևերում, որտեղ ամրաշինական պրակտիկայում վաղուց հայտնի սովորական կոնտրֆորսների հետ միաժամանակ հանդես են գալիս անհամեմատ ավելի ուշ տարածում գտած երկկողմանի ելուստով հզոր աշտարակները։ Որքան մեզ հայտնի է, այս համադրությունը բնորոշ է միայն ուրարտական ամրաշինությանը։

---

26 R. Naumann, Architektur Kleinasiens, Tübingen, 1955, էջ 253։
27 E. Strommenger et M. Hirmer, Նշվ. աշխ., էջ 88։
28 K. Bittel und R. Naumann, Նշվ. աշխ., էջ 84։
29 R. Naumann, Նշվ. աշխ., էջ 280։
30 E. Strommenger et M. Hirmer, Նշվ. աշխ., էջ 103։
31 R. Naumann, Նշվ. աշխ., էջ 271։
32 E. Strommenger et M. Hirmer, Նշվ. աշխ., էջ 113։
33 Նույն տեղում, էջ 78։

Այսպիսով, Թեյշեբաինիում տեսնում ենք ամրաշինական որոշ տարրեր, որոնք բնականոն զարգացում չեն ապրել նախորդ շրջանի ուրարտական ռազմական ճարտարապետության մեջ և արդյունք են ասսուրա-բաբելական ուղղակի ազդեցության։

Լեման-Հաուպտը դեռևս այն ժամանակ, երբ չէր պեղված և ուսումնասիրված ներկայիս հայտնի ուրարտական հուշարձանների գերակշռող մասը, խորաթափանց կերպով նկատել է, որ ուրարտական ճարտարապետության վաղ ակունքները ամբողջովին կապված են փոքրասիական-սիրիական ճարտարապետության հետ և բավական հեռու են ժամանակի ասսուրական հուշարձաններից, այն դեպքում, երբ VIII—VII դարերում կարելի է դիտել որոշակի նմանություններ ուրարտական և ասսուրական ճարտարապետական կառույցներում[34]։ Այս առումով շատ հետաքրքիր դիտողություններ ունի Ս. Մ. Բացիևան, որն ուսումնասիրելով մ. թ. ա. IX դ. կեսերին պատկանող, այսպես կոչված, Բալավաթյան դարպասների բարձրաքանդակները, նկատել է, որ այնտեղ պատկերված ուրարտական և փոքրասիական ամրոցներն ու զինվորական հանդերձանքը նման են միմյանց և շատ տարբեր բաբելականից[35]։ Ավելի ուշ շրջանում ուրարտական զինվորական հանդերձանքը նմանվում է ասսուրականին[36]։ Նման երևույթ տեսնում ենք նաև ուրարտական գրելաձևում։ Մ. թ. ա. IX դ. սկզբում Ուրարտուն սեպագիրը վերցրեց Ասորեստանից։ Հետագայում նա մշակեց ասսուրականից տարբեր՝ ուղղագիծ կողմերով եռանկյուն սեպերի գրելաձևը։ Իսկ ավելի ուշ դարձյալ վերադարձավ ասսուրական գրելաձևին[37]։ Ուրարտուի պատմության ուշ շրջանում, ռազմական և քաղաքական պայմանների բերումով, ասսուրական հզոր ազդեցություն են կրում ոչ միայն ուրարտական, այլև ժամանակակից փոքրասիական, սիրո-խեթական հուշարձանները[38]։

Թեյշեբաինիի միջնաբերդը պետք է համարել այս համընդհանուր երևույթի ցայտուն դրսևորումներից մեկը ուրարտական ուշ ամրաշինության մեջ, որտեղ ասսուրական հզոր ու անմիջական ազդեցությունը զգացվում է ոչ միայն մանրամասներում, այլ ամբողջ կառուցվածքի հատակագծային և տարածական հորինվածքում։

Թեյշեբաինիից մոտ մեկ դար առաջ հիմնադրված Էրեբունի և Արգիշտիխինիլի քաղաքների միջնաբերդերը իրենց ուղղագիծ և համեմատաբար կանոնավոր հատակագծային ձևերով հանդերձ, լուծված են տեղական ավանդներին բնորոշ ազատ հատակագծման սկզբունքներով։ Այստեղ միջնաբերդի ներքին տարածությունը կազմակերպվել է մեկհարկանի շենքերի առանձին կանգնած ծավալներով, որոնք դասավորված են ազատ և ասիմետրիկ՝ ռելեֆի պայմանների խիստ նկատառումով։ Բոլորովին այլ է Թեյշեբաինին։ Նրա միջնաբերդը երկհարկանի ամբողջական մի շենք է, որն իր հսկա ծավալի մեջ է ամփոփում և՛ շքեղ ու հանդիսավոր պալատական սենյակները, և՛ պաշտա-

---

34 C. F. Lehmann-Haupt, Armenien einst und Jetzt, I, Berlin, 1910, էջ 477։

35 С. М. Бацева, Борьба между Ассирией и Урарту за Сирию, «Вестник древней истории», 1953, № 2, էջ 26—28։

36 Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, էջ 55։

37 Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960, էջ 34։

38 E. Akurgal, նշվ. աշխ., էջ 130—135։

մունքային կառուցվածքները, և՛ տնտեսական սենյակներն ու պահեստները[39]։ Վերջիններս տեղավորված են շենքի առաջին հարկում և չունեն ինքնուրույն արտաքին մուտք, այլ աստիճանների միջոցով հաղորդվում են միայն երկրորդ հարկի հետ[40]։ Հատակագծային ցանցը, չնայած բլրի անկանոն ու կտրտված եզրագծին, հյուսված է բացարձակապես ուղղագիծ և փոխուղղահայաց պատերով։ Միջնաբերդի դեպի բակ նայող արևմտյան ճակատը լուծված է խիստ սիմետրիկ ու հանդիսավոր և, ընդհանրապես, ամենուրեք զգացվում է հրաժարում ազատ հատակագծման ավանդներից և ձգտում դեպի սիմետրիկ-մոնումենտալ ճարտարապետական ձևերը, որոնք ավելի հարազատ են Միջագետքի ճարտարապետությանը· հստակապես ուշ ասսուրական և նոր բաբելոնյան ժամանակաշրջաններում։ Սակայն այս ամենով հանդերձ, Թեյշեբաինիի միջնաբերդը շատ հեռու է ասսուրական պարզ ընդօրինակում լինելուց և դրան չէ, որ ձգտել է ճարտարապետը։ Ինչպես այստեղ, այնպես էլ Արագածում, որի միջնաբերդը նույնպես լուծված է մեկ ամբողջական ծավալով, ստացվել է վարպետորեն կատարված մի սինթեզ, որտեղ առավել քան երբևէ ուրարտական ճարտարապետության մեջ արտահայտվել են հարթավայրային, ռեգուլյար հատակագծման տարրերը։



Աղյուսակ 3

39 Էրեբունիի և Թեյշեբաինիի միջնաբերդերի հատակագծային-տարածական լուծումների այս տարբերությունը նշում է Կ. Լ. Հովհաննիսյանը. տե՛ս К. Л. Оганесян, Архитектура Эребуни, էջ 21—22։

40 Б. Б. Пиотровский, Кармир-Блур, III, Ереван, 1955, էջ 7։

* * *

Եթե ամրոցի մուտքի կառուցման առաջին՝ ճակատային և սիմետրիկ սկզբունքի ակունքները կարելի է տեսնել հնագույն բերդշեներում պարսպի մեջ արված պարզունակ բացվածքի օրինակով, ապա երկրորդ տիպի մուտքերի ծագումը պետք է վերագրել ավելի ուշ շրջանի, երբ կարող էր արդեն մշակված լինել ռազմագիտական երկարամյա փորձ և հմտություն։ Այսպիսի մուտքի հայտնի ամենավաղ և պարզ կառուցվածքներից մեկը, մեր կարծիքով, կարելի է տեսնել Շամշադինի շրջանի Մասմալար կոչվող ամրոցում[41], որի կառուցումը վերագրվում է II հազարամյակի վերջին։ Այստեղ բլուրն օղակող պաշտպանական պարիսպները չեն փակվում, այլ հյուսիսային մասում միմյանց նկատմամբ մի փոքր շեղվելով, ստեղծում են բլրի գագաթը տանող գալարապտույտ մի ճանապարհ, որն անցնելով խզված պարիսպների միջև առաջացած միջանցքներով, կարող էր պաշտպանության տակ առնվել երկու կողմից (աղ. III, գծ. 1)։ Պաշարման ժամանակ շրջադարձային, համեմատաբար նեղ մասերում ճանապարհը կարող էր փակվել քարերի շարքով։ Ամրոցի մուտքի այսպիսի պարզ և սրամիտ լուծումը, երբ պարիսպները հատակագծում հյուսված են ճանապարհի գալարապտույտներին և նրա համար միաժամանակ կատարում են հենապատերի դեր, հավասարաչափ նպատակահարմար է և՛ խաղաղ, և՛ պատերազմի պայմաններում։

Նման, բայց մի փոքր տարբեր և կատարյալ կառուցվածք ունի նաև նույն շրջանի և նախորդին ժամանակակից Սեպրիկ ամրոցի մուտքը[42] (աղ. III, գծ. 2)։ Այստեղ պարիսպը մուտքի մասում 3,5 մ չափով թեքվում է դեպի ներս, ստեղծելով մոտ 25 քառ. մ միջանկյալ տարածություն երկու արտաքին և ներքին դռների միջև։ Անկյունային տեղադրությամբ, ասիմետրիկ լուծված մուտքի տիպական օրինակներ են Ղուկասյանի Բողղալա և Կամոյի Լանջաղբյուր գյուղի ամրոցների մուտքերը (աղ. III, գծ. 3, 4)։ Վերջինում լայն ճակատով երկկողմանի, խաչաձև հարվածի հնարավորություն ստանալու համար մուտքի ձախակողմյան պարիսպը թեքությամբ առաջ է բերվել, որով և, սահմանափակելով թշնամու գործողությունների հրապարակը, մուտքի առջև արհեստականորեն ստեղծվել է պաշտպանական ուժերի քանակական գերակշռություն՝ ակտիվ հարձակողական ուժերի նկատմամբ։ Նույն սկզբունքով են կառուցված ուրարտական էլար և Արագած ամրոցների մուտքերը (աղ. III, գծ. 5)։ Ուրարտական ռազմական ճարտարապետական լավագույն նմուշներ են Էրեբունիի և Արգիշտիխինիլիի արևմտյան միջնաբերդի մուտքերը, որոնք տեղադրված լինելով պարսպի անկյունավորվող մասում, իրենց հատակագծի հիմքում ունեն շլյուզով բաժանված կրկնակի դարպասների սկզբունքը, որի մասին խոսվեց վերը։ Էրեբունիում դարպասները դրված են նույն առանցքով, իսկ Արգիշտիխինիլիում՝ միմյանց նկատմամբ 90°-ի տակ (աղ. III, գծ. 6, 7)։

Թեև Առաջավոր Ասիայում ավելի տարածված է ամրոցի մուտքի սիմետրիկ, ճակատային տեղադրումը, սակայն երկրորդ սկզբունքը ևս բավական զարգացած ձևերով կիրառություն է ունեցել ոչ միայն Փոքր Ասիայում և Միջագետքում, այլև Պաղեստինում և Հունաստանում։ Այդպիսին են Տրոյայի VI

41 Ս. Ա. Եսայան, Կ. Կ. Ղաֆադարյան. նշվ. աշխ., էջ 81։

42 Նույն տեղում, էջ 84։

շերտի (XX դ. մ. թ. ա.) ամրոցի[43], Մեգիդոյի (XVIII դ. մ. թ. ա.)[44], Միքենի (XIV—XIII դդ. մ. թ. ա.)[45] և Աշուրի Գուրգուրի կոչվող մուտքերը[46] (աղ. III, գծ. 8, 9, 10, 11)։ Բերված օրինակներում հետաքրքիր է այն փաստը, որ եթե Տրոյայի II շերտի ամրոցը ուներ ճակատային, սիմետրիկ մուտք, ապա մոտ հինգ դար հետո VI շերտում տեսնում ենք ամրոցի անկյունային մուտք։ Ճակնարկելով ծագումնաբանական որևէ ուղղակի առնչության գոյությունը, ցանկանում ենք ուշադրություն հրավիրել նաև այն նմանության վրա, որ կա ժամանակի և տարածության առումով այդքան միմյանցից հեռու Մեգիդոյի, Միքենի և Արգիշտիխինիլիի ու Էրեբունիի ամրոցների մուտքերի հատակագծերի լուծման մեջ։

Ընդհանրապես, պետք է ասել, որ հոդվածում բերված համեմատական աղյուսակները, իհարկե, չեն ենթադրում անվերապահորեն ուղղակի և պարզ ծագումնաբանական կապ որպես օրինակ ներկայացված կոնկրետ հուշարձանների միջև։ Այստեղ ժամանակագրական կարգով դասավորելով մինչ այժմ ուսումնասիրված հուշարձանների սահմանափակ նյութերը, փորձել ենք նրանց մեջ որոնել յուրաքանչյուր դարաշրջանին հատուկ ամրաշինական սկզբունքները, մտքի ու փորձի զարգացման մակարդակը և այդ հիման վրա ընդհանուր գծերով տեսնել և բացատրել ուրարտական ամրաշինական ձևերի ստեղծման և ժամանակի ընթացքում փոփոխման շարժառիթները։

ЗАМЕТКИ ПО УРАРТСКОЙ ФОРТИФИКАЦИИ

К. К. КАФАДАРЯН

(Резюме)

Образование и развитие форм урартских оборонительных сооружений происходили на базе многовековых традиций крепостного строительства на территории Армянского нагорья эпохи бронзы и под влиянием культур современных ему государств Месопотамии и Малой Азии. Исходя из приведенных в статье сравнительных, типологических таблиц, где в хронологическом порядке и в едином масштабе сопоставлены плановые формы крепостных стен и входов фортификационных памятников Армении и Передней Азии III—I тыс. до н. э., делается попытка найти характерные для каждой эпохи принципы постройки крепостных сооружений и на этой основе определить и объяснить возникновение первоначальных форм и тенденцию развития урартских фортификационных сооружений.

---

[43] R. Naumann, նշվ. աշխ., էջ 255։

[44] Y. Yadin, The Art of Warfare in biblical lands in the Light of archaeologica discovery, London, 1963, էջ 68։

[45] S. Toy, A History of fortification from 3000 BC to AD 1700, London, էջ 11։

[46] A. T. Olmstead, History of Assyria, Chicago and London, 1964, էջ 149։